

## Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ Ք Ս Ի Ն Օ Դ Ի Օ Ր Ա Գ Ի Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ի Յ .

Սեպտ. 23. Տեարք Անդամք բանալով Հանգուցեալ Մովսէս Արքեպիսկոպոս գանձակեցու գրեանց մնացած արկղը՝ գտան նորանում 85 գիրք, որոնցից 11 գիւանատան ծառայող Յովհաննէս բէգ Եսայեանցին սեպհականութիւն են, և 74 Հանգուցելոյն. Սինօզը հրամայեց Հանգուցեալ Մովսէս Արքեպիսկոպոսի 74 գրեանքը ցուցակի պատճէնով ուղարկել Մայր Աթոռի մատենադարանապետ բարեշնորհ Սահակ Աբեղայ Ամատունուն, անցնել մատենադարանի տումարը, իսկ 11 գրեանքը յանձնել Յովհաննէս բէգ Եսայեանցին ստորագրել տալով ցուցակին:

Սեպտեմ. 16. Տփխիսի Ս. Գայիանեան Հայ օրիորդաց եկեղ. երկդասեան ուսումնարանի վարչութիւնը այս տարուայ յունիս 22ին 13 թ. յայտարարութեան հետ ուղարկում է Սինօզ այրի կատարինէ Եարալեանցի խնդրի պատճէնը, որը իւր Հանգուցեալ այր Նիկողայոս Գէորգեան Եարալեանցի յիշատակը յաւերժացնելու համար նուիրում է նոյն ուսումնարանին Տփխիսի փոխատու ընկերութեան երկու 5<sup>0</sup>/<sub>0</sub> դրամատոմս № 6315 և 6316. 2000 բուբլի արժողութեան, դաստիարակելու այդ գումարի տուկոսիքով երկու որդեգրուհիք, որից մինը պիտի ընտրի այրի Եարալեանցը մինչև իւր մահը. իսկ եթէ այդ ուսումնարանի գոյութիւնը կարճուի, այն ժամանակ այդ գումարը պահուի Մայր Աթոռի Ս. Էջմիածնի գանձարանում և երեք աւագ եպիսկո-

պոսների իրաւունքով տոկոսը գործ դրուի նոյն նպատակով որ երկրում արժան տեսնեն: Սինօզը հրամայեց Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիայի միջոցաւ Ս. Գայիանեան օրիորդայ ուսումնարանի հոգաբարձութեան 50/0 2000 դրամատոմսը պահել իւր գանձարանում և որդեգրուհեաց ընտրութեան վերաբերութեամբ ի կատար ածել Կատարինեայ Եարալեանցի առաջարկութիւնը: Այլ և ի գիմաց Սինօզի յայտնել շնորհակալութիւն իւր բարեգործութեան համար, որով յորդորում է ազգայիններից շատերին հետեւել իւր բարի օրինակին:

—

Սեպտեմ. 16. Սինօզը հրամայեց Կարմիր վանքի վանահայր Ստեփաննոս վարդապետ Իսկեանդարեանցին նոյն պաշտօնով փոխադրել Երնջակի Ս. Կարապետի վանքը, իսկ Միքայէլ Աբեղայ Տէր Մինասեանցին կարգել Աթոռապատկան Բճնի գիւղի վերահսկող և Դարաչիչակի կողմի գիւղօրէից գործակալ. իսկ Յովսէփ Աբեղայ Առիւծեանցին կարգել վանահայր Ս. Ստեփաննոսի Կարմիր վանքին պատուիրելով՝ որ մինը միւսին պատշաճաւոր ցուցակաւ յանձնելով բոլոր վանահայրական հաշիւները, տոմարները, կահ կարասիքը՝ փութան իւրեանց պաշտօնատեղին: Այս մասին տալ տեղեկութիւն Երևանի Կոնսիստորիային և Նախիջևանի հոգևոր կառավարութեան:

—

Սեպտեմ. 16. Սինօզը պատուիրեց Շամախու թեմի Առաջնորդ Գեր. Մեսրոբ Սրբազանին անյապաղ յետս կոչել Սահակ Վարդապետին Սաղիանու վանքը իւր ապաշխարանաց տեղը, որին ինքը Գեր. Սրբազանը թող էր տուել գնալ Տիփլիս հիւանդութեան պատճառաւ:

—

Սեպտեմ. 16. Որովհետև Բանդիվանցի Բաղալ Գրիգորեանցի գուտար Զարոյի՝ Յակովբ Գրիգորեանցի հետ եղած ամուսնութիւն բռնի եղած չէ, այլ կամքով, ուստի Սինօզում կարճել այդ գործը և տալ տեղեկութիւն Երևանի Հայոց Կոնսիստորիային:

—

Ելիսաւէտապօլի նահանգական դատարանի ծանուցագրի համաձայն Տաթևի փոխանորդ Արժ. Անանիա վարդապետը՝ վանքի հաւատարմատար Պ. Ստեփան բէգ Իւզբաշեանցի տկարութեան պատճառաւ այն ինչ նորա փոխարէն կառավարութեան քարտուղարի մի գրագրի և մի սուրհանգակի հետ ուղևորում է գէպի Ելիսաւէտապօլ վանքի «Խաչի հող» «Գաւթի գհուկ» «Հիւճութի» և «Քերս» կալուածների գործերը պաշտպանելու, քրտաբնակ Մախմուտու գիւղից Սիւշի գիւղը անցած ժամանակ՝ յայտնի աւազակապետ Նաբիի առաջնորդութեամբ մի խումբ աւազակներ գրոհ տալով նոցա վերայ՝ «Կիզիլու դարասի» կոչուած ձորամիջում և ձորի միւս ավի վերայ 200 հոգի ձերբակալուած այր մարդկանց և կանանց հետ երեկոյեան գէմ կողոպտում են զինաթափ քարտուղարին, գրագրին և սուրհանգակին, որոց աննախանձելի դրութիւնը ի նկատի ունենալով յիշեալ Արժ. փոխանորդը, 30 յունիսի թ. 25 մի յայտարարութեամբ խընդրում է Սրբազան Սինօղից, որպէս զի նոցա կրած զրկանքների և ունեցած կորուստների փոխարէն իբրև օգնութիւն տրուի նրանց նոյն վիճակի կալուածոց արդիւնքից 107 բ. 60 կոպ: Այս մասին Սրբազան Սինօղը խղճալով Հոգևոր կառավարութեան աննշան ռոճկով ապրող ծառայողների վերայ, պատուիրում է յիշեալ Արժանապատիւ վարդապետին իբրև շնորհ՝ տալ նրանց կալուածոց արդիւնքից իրենց կորուստների փոխարէն մի միայն յիսուն և ութ բուբլի:

—

Աղէքսանդրապօլի փոխանորդ բարեշնորհ Սաթունեան Գարեգին վարդապետի 1<sup>ն</sup> յուլիսի տարւոյս թ. 152 Սրբազան Սինօղին մատուցած խնդրի համաձայն Սինօղը արձակեց նորան փոխանորդութեան պաշտօնից և ուղարկեց իբրև միարան Հառիճոյ վանքը որի տեղ և կարգեց բարեշնորհ Բարխուդարեան Մակար ծայրագոյն վարդապետին:

—

Ի 16 Սեպտ. Աղէքսանդրապօլու Արղութեան օրիորդաց զըպրօցի 40,000 ռուբ. մայր գումարի բանկային արժեթղթերը՝ որ

բերում է տարեկան 2731 ա. 23 կոպ. տոկոս, պահպանուում է Ս Էջմիածնի գանձարանում: Սինոզը անցեալ և ներկայ տարուայ սկզբում տուել էր նոյն դպրոցի հոգաբարձութեանը 3500 ա. փոխ Մայր Աթոռի գանձարանից դպրոցը նորոգելու համար, այն պայմանով՝ որ վերագրեալ գումարի տոկոսից նախ լրացուի տուած փոխը և ապա մնացածը տարէ ցտարի հատուցուի դպրոցի հոգաբարձութեան, բայց Երևանի թեմական Տեսուչ բարեկ. Մեսրոպ քահանայ Մելեանցը նոյն հոգաբարձութեան հետ խընդրել էր Սինոզից, որ դպրոցի վերոյիշեալ 3500 ա. պարտուց հաշուին նորա գումարի այս տարուայ տոկոսից միայն վերցուի 1800 ա. և մնացեալ 1700 ա. լրացուի առաջիկայ երկու տարուայ ընթացքում: Իսկ տոկոսից աւելացած 931 ուրբլին ուղարկուի հոգաբարձութեանը դպրոցի ծախքը հոգալու համար, որովհետև սուրբ Փրկիչ եկեղեցւոյ վիճակային տղայոց ուսումնարանից չէ ստացուում 2400 ա. Արղութեան դպրոցի պարտքը և այլ ևս ուրիշ եկամուտ չկայ, հետևաբար դպրոցը պիտի փակուի: Սինոզը զիջանելով թեմական Տեսուչ բարեկրօն Մելեանց քահանայի միջնորդութեանը, պատուիրեց Մայր Աթոռի գանձապահին՝ որ 2731 ա. տոկոսից 1800 ա. վերցնել Ս. Աթոռի 5400 պարտուց հաշիւն և մնացեալ 931 ուրբլին Տեսչի ձեռքով յղել նոյն դպրոցի վարչութեանը, իսկ այդ պարտուց մնացեալ 1700 ա. լրացնել 1892—1893 և 1893—1894 ուսումնական տարիների ընթացքում: